

Գրիգոր Մազիստրոս

ԹՂԹԵՐ



eMatenadaran.

Գրիգոր Մագիստրոս Թղթեր

http://www.litres.ru/pages/biblio_book/?art=24431126

Թղթեր:

ISBN 9781772467970

Аннотация

Գրիգոր Մագիստրոսի աշխարհայացքը եւ գիտական հետաքրքրություններն արտահայտվել են իր բազմաթիվ նամակներում («Թղթեր», հրտ.՝ 1910, Ալեքսանդրապոլ): Նամականին ժամանակաշրջանի գիտամշակութային եւ ուսումնակրթական միտումներն ու ոգին բնութագրող կարեւոր հուշարձան է, որում արժարժված են գիտական, գրական եւ քաղաքական կարեւոր հարցեր:

Содержание

[U]	4
[F]	7
[G]	15
[T]	20
[G]	23
[Q]	32
[E]	35
[L]	39
Конец ознакомительного фрагмента.	42

Գրիգոր Մագիստրոս Թղթեր

[Ա]

**Առ հոգեւոր տէրն Պետրոս
կաթողիկոս ի ժամանակին,
յորում ի կապանաց իւրոց
վերստին յաջորդեաց յաթոռ
իւր, խնդրեալ ի Գրիգորէ զգիր
սրբոյն Եփրեմի Հաւատոցն, զոր
ընթեռնոյր մինչ ի բանտին էր:**

Թէպէտէ ըստ գեղեցիկ խնդրոյ քում լուսափայլութեան, պետականդ բոլոր սրբազանից եւ գլուխ առաքելական, պարտ վարկանիս երկարագոյն նորագոյն բանս իմաստասիրել ծառայի քում, որով գուարճանաս իբր զհայր ի վերայ որդւոյ, սակայն սիրելի է ինձ միշտ կարճատօս հատանել: Վասն զի զբոլորն մասն միակի գիծ ուղղակի զբովանդակն պարտէ գուղղանկիւնեացն թէպէտէ մասն գոլ: Եւ իմաստնոյն մի բան բաւական է զբիրս բերել զկնի

հետեւաբար:

Արդ թողից զայսոսիկ նախադրութիւն մակագրել մեծագունիդ զլիսոյ, որ ամենայնի ես բաւական, եւ զանսպառն հեղուս գիտութիւն եւ շնորհ համեմատ սրովբէականն մականունութեան: Եւ զայսոսիկ ընձեռել ոչ անտեղի վարկայ. վասն որոյ եւ Դաւթի ի զուարճալի նուագերգութեանն նուիրական բան՝ Քեզ վայել է օրհնութիւն Աստուած ի Սիովն եւ քեզ տարցին աղօթք յԵրուսաղէմ: Իբրոյ զի՝ թէպէտ ոչ էր անծանօթ ծագաց երկնի եւ ընդ երկրաւս ածել զբոլորն յօրհընութիւն Արարչին, սակայն որ ընտրեացն օրհնել, եւ որ ծագեաց զլոյս գիտութեան, եւ որ ընկալան հաւատով, այլ ոչ ի հեթանոսս: Եւ այժմ առ այս բաւական է բանս:

Այլ դու ո'վ գլուխ ամենայն հաւատոցն Յիսուսի եւ վախճան, որ նախքան զայսոսիկ, թէպէտեւ երանելին այն Քաղղէացի Խորինն Ասորի, մարգարէական ունելով հոգի եւ նշանս յերկնից ի տուշութենէ վերնոյն, եւ առաքինութեամբ ծայրացեալ անեգրական վարուք եւ վարդապետութեամբ, վեհ քան զբոլորն սեռ իմաստիցն սիրողացն, զայսոսիկ հիմն հաւատոց հաստատէ, այլ առ հաւատացեալդ Աստուծոյ բանին է հաւատ. վասն զի ի մէջ քրիստոսասիրաց է բանդ, որով սպառագինեալ զօրավարդ, վառելով վահանաւորեալ, անվտանգ ի նետիցն մնացեալ, գաղտնի առեալ աւար տացես մեզ կապուտ: Եւ սատարեալդ հարցն ցանց ամրացուցես քոյինդ անքուն ակամբ, նոր նորոգեալ ի հաւատ հաստատուն առաւել քան զԱբրահամուն: Վասն զի

գի՞նչ են հաւատք, եթէ ոչ յուսացելոց իրացն հաստատութիւն եւ յանդիմանութիւն, որոց ոչն երեւին. եւ որ այսմ հետեւին միանգամայն:

Աւադիկ դու ընկա՛լ, վէ՛նդ եւ հի՛մն, գհաւատոցն հաստատութիւն, այլ եւ զընկերդ քո՝ ի քումն միայնութեան եւ գփոխանդ բոլոր քահանայական կարգաց. վասն զի ըղձալի էր քեզ քան զոսկի եւ քան զարծաթ. վասն զի պատուիրանք Տեառն լոյս են եւ լոյս տան աշաց, եւ յայնմանէ երկիւղ սուրբ, որ մնայ յաւիտեան:

Արդ գիր ծառայի եղիցի կարգեալ ի գիր մատենին, որ ի կատարածի յիշատակ բարոյ, ողջ լե՛ր փոխանո՛րդ Յիսուսի:

[Բ]

**Առ տէր Պետրոս ի ժամանակի
խուժան յառնելոյ ի քաղաքին ի
վերայ նորա. բան մխիթարական
եւ հարցումն Անանիայի
գրոց Շիրակայնոյն, գոր
մեծ Քննիկոնն անուանեն:**

Ջյաւէտ ծայրացելոյդ բոլոր լրութեան կաթողիկէ
եկեղեցոյ մշտափայլ առ իս ճառագայթից ըղձամ, տոչորեալ
խանդակաթ եւ յաւէժ տոփմամբ, քանզի մշտօրեալ
տենչամք արեգակնային եւ արփիականն բաղկացուցանելոյ
գյոգնական կարեւորութիւնս, գոր վաղ ուրեմն այս ի մէնջ
փախեաւ: Ջի բնաւին ի բոլորն բարոյական բարգաւաճիցն
թափուր գմեզ թորեսցէ: Վասն որոյ ի ճահ ինձ այժմ
եկեսցէ ճեմականն Երիպիղէս յիրում տախտակի, սակս
տորբանականին Տրոքոնեայ ասելով. Ո՛վ Տրոքոնեայ, յորո՞ւմ
բախտի բարի գոլ կարծես՝ մակացու ի ծնէ կուրա՞ց
եթէ զկնի պատահման հանգունակի մակեղուտ անանջատ:
Եւ զի գայտսիկ ոչ այլ ինչ իմաստասիրէր բայց միայն
վասն իւրոյ ումեմն Հերմեայ աշակերտի. զի նորա, թողեալ
գիմաստասիրութեանն արհեստ, չոգաւ ի կենցաղական

գեղխումն. իբրո թէ կոյր ի ծնէ եղեալ, զգայ զկորութեանն, եւ ըղձայ տեսութեան, իսկ զկնի տեսութեան՝ ի պատահմանէ կորացեալ, յոյժ տարակուսելի է: Չոր քանս զքեզ ակն տունջեան անուանէ, եւ զմեզ կափուցեալս ի ճառագայթից եւ խրթնիս եւ խաւարչտին եղեալ: Սակայն առ այսոսիկ սուղ ինչ եթէ իմաստասիրեցից, ո'չ պատկառելի է, այլ մանաւանդ փութալի. թէպէտ եւ ոչ աստուածպետականին հասին բախտի եւ օծման եւ մաքրութեան, սակայն կաթիլ իմն աստուածային առ նոսա կաթեալ: Փերեքղէս փարթամն այն ատտիկեցի, տոգորեալ կարասեօք, ի ծովականն Տրովադայ յԱպպինուէ արտալաժի սակս իրաւացի գոլոյ նմա ի խուժանէ: Եւ Պղատոն ի Սիկիլիայ վաճառեալ, թէպէտ եւ պատճառեն Եպիկուրեանքն սակս խրախճանութեանն չոգալ: Սոկրատէս մեռանի սակս համբակացն դիտողութեան եւ ի կատական հեզնաբանութիւնսն Անիրա՞, ասեն, մեռանիս. պատասխանեալ. Կամի՞ք, զի յիրալի: Թողից զյոզունցն՝ զչոմերի Մելամպոտեան, զԴիմոսփինեան օրէնսդրի եւ զՈդիսեայ հռետորի, եւ որոց այսմ են հետեւեալ: Չի ո՞ որ ի կենցաղումս, որ ըստ Աստուծոյ վարս, ոչ լիցի դժպիհի: Որք Մովսէսի այնքանեացն արուեստից եւ յաստուածուստ երեւման եւ պարգեւաց ոչ անսացին, եւ զԱհարոն խտտորեցին, եւ մի ըստ միոջէ մինչեւ ցՅիսուս. որ եւ մահու մատնեալ զկեանս իրեանց կախեալ զփայտէ խնդրէին պարգեւս, եւ ի վերայ գլխոց իրեանց զարիւնն Աստուծոյ ոչ շատանան, այլ եւ տողանի յորդիս իրեանց ձգեցին, զի այնու յերկարասցի յամառութիւն կորացելոցն, որ

մինչեւ ցայս վայր թշնամիք խաշին գտեալք յանդգնին:

Եւ զի՞նչ ինձ այսոքիկ. զի Արամեան անմտութիւն ցայս ոչ միանգամ կամ երկիցս քայց եւ քազում անգամ յամատեալք: Եւ զի՞նչ զարմանս է, եթէ Տէր ճշմարիտ է, եւ որ այսմ հետեւին, քանզի պարտաբար ծանուցանելոց է մեզ. ներհակս տրամախոհիմք թէպէտ եւ յունակութիւնս տրամադրութեանն առ ինձ ունակութիւնս բերեալ՝ ումեմն մակստացական եւ անհանգանակ եւ ուրումն բնաբար եւ սեռական ի միում տեսակի: Քանզի հատանունք, որք ոչն են ՚ի միում տեսակի, նուագագոյն ՚ի ներհակումն գտցի. եւ ոչ միայն ի տեսակում այլ եւ յինքեան կրէ իւրաքանչիւր որ քաջողջութիւնս եւ խօթութիւնս, քանզի եւ սոքա ՚ի միում տեսակի յատուկ ներհակին. վասնորոյ փութալի է ըստ կարողութեան առողջութեան եւ բնականագունին եւ բնաբարն առաքինութեան հետեւել եւ այսմիկ որքան հնարաւոր է բաղձալ. քանզի հարկաւորն ի մեզ հագիւ այսմ հաւանի, միշտ զհակառակսն այսմ հայցելով. եւ զանօգտակարագոյնսն անզգած եղեալ, ոչ երբէ՛ք զգասցի զխօթութեանն արշաւանս եւ զխիթս խստագոյնս. զի ՚ի վերայ եկեալն տազնապ՝ մանաւանդ եթէ զլուծումն եւ զարտահանումն ՚ի կապակցէն, յորս կաշկանդեալն է բազմաբեղուն յօդիւք, ոչ երբէք զայսոքիկ աղէտ տարակուսանաց խոկայ, այլ խնդրէ զցաւագնոտսն եւ զանախորժսն, ախորժակս մթերեալ յինքեան զհամաքամուածս եւ զտողս եւ զափռողիտականս եւ զատիրրագունականն եւ զմանիական

մեղանապողականան և կիզեալս, զի դժոխաբոյժ ամենեւին ելով բուժողացն:

Այսոքիկ են տենչումն ըստ մարմնոյ կենցաղոյս, քանզի գառողջութիւնսն անաշխատ միայն հայցեն ընդունիլ, իսկ զհիւանդութիւնսն յոգնական ջանիւ հնարին յինքեանս քարշել, եւ ըստանձնեալք, ապա ուրեմն զգօնանան առ բժիշկս ընթանալ եւ զարտալաժեալն յինքեանց բնականագոյն քաջողջութիւնս դարձեալ խնդրեն վերստին արծարծել, զոր հազիւ զպատահմունք որակութեանն այն յեղափոխել կարասցէ: Վասնորոյ զգուշացուցանէ այսպէս նախասականն Հիպոկրատէս յիւրում մատենի առ Պոլիոսոս ոմն հրաշաքանելով այսպէս. Ծայրագոյն է խոկալ. ո՛վ մանուկ, յանախորժակացն ախորժից հրաժարել եւ ի թանձրագոյնսն ոչ ընթանալ կերակուրս քան զկնի հեշտութեանցն վարանել եւ դառնագոյն դեղեալ զինքեանս ՚ի բժշկաց, քանզի հեշտութիւնք այսոքիք միայն ճաշակելեացն են, իսկ տագնապումն եւ վիշտք բոլորն շարունակեալ անդամոց: Եւ այսոքիկ այսքան:

Իսկ դու ո՛վ վսամական եւ սրբագանութեանցն նախապետական, զարիական սերտութեան գմտաւ ամցես եւ զարդարութեանն ողջախոհութիւն. քանզի այսու զքեզ մշտափայլ տեսանենք, եւ մի՛ ինչ ի քում մակաւասար մականտաժութիւնս թեւակոխեսցիս, խոկալով տրտմական կամ եթէ տխրութեան ինչ ի քեզ կրել ախտս. քանզի յորժամ տկարանամք, յայնժամ զօրանամք. եւ հոգին ի թիկունս հասանէ տկարութեան մերում. քանզի որ զփորձ

առեալն է, կարող է փորձանաւորացն օգնական լինել: Եթէ պարտ է ՚ի նորագունիցն եւ որ զկնի Յիսուսի հարք քո եւ աթոռակիցք յայնցանէ բերել ՚ի ճահ գնոցայն որ ըստ մարմնոյ պատահմունս, նախ գներոյն Պարթեիին եւ որ ՚ի նորայն արմատոյ յԱրամեան նահանգէ կրեալս եւ որ զկնի այսորիկ յոմանց եւ յիւրոցն սերէ՝ զՅովաննոյն ի մետաղսն փոխեալ ի կենցաղոյս, եւ գմիւտոյն Գրիգորի ՚ի քաղաքէն արտալածեալ: Եւ զկնի այնորիկ ըստ ասացելումն աստուածաւանդն տառի զգերեզմանսն պատուել եւ զնշխարսն ժողովել, թոի ինձ թէ հրացեալն նախանձ շիջեալ էր եւ բոցն յաշաղութեան հնոցին որ առաւել քան գատրուշանին Չրադաշտին, զովացեալ, եւ կայծակն հրափայլութեան վեհագոյն քան զՊոռնեդեայն եւ զՀեփեստոսին ցածուցեալ. սակս այնր զկնի եկելոցն երկարածգէր տեսութիւն, զառաջնոցն անկումն եւ զգայթակղութիւնս հայցելով, զգուշանան: Բայց թոի ինձ, եթէ ի խորագոյնս ոմանք այժմ անկանին խորխորատս: Թէպէտ եւ գնախընթացութիւն այսպիսեաց ուղեգնացութեան ըմբերանեալ պարսաւեն, բաւական է բանդ. միայն պարտ է աւագ աշօք շորջ հայել եւ ժամանակի ծառայել, որպէս ումենն իմաստնոյ քան գայտսիկ թուցաւ:

Փոխա՛ն Յիսուսի, համարձակիմք, միշտ սովորեալ յառատածիր պարգեւս, զկարեւորսն եւ զպիտանացունս յարատեւական բաշխելով քեզ, որ ոչդ երբէք դանդաղիս զգիրս Անանիայի Շիրակայնոյ. որ բազում աշխատութեամբ եւ յածաշու խոնջմամբ հաւաքեալ ի բազմագան եւ յոքնաբեղուն մատենից. յորում եւ ենթակայացեալ են ոչ

միայն քառիցն արհեստք այլ բոլոր էակացն խոկնունս.
որ են այժմ ի տան տէրունեան, գոր նախքան գրեզ
խորթնացեալ եւ թագնի ընդ գրուանաւ ծածկէին. գոր
եւ ինքն իսկ, որ մատենագրեաց զայդոսիկ յառաջնում
իրոյ տրամաբանութեան բագում տարակուսանս եւ
կեղերջականս սակս մերոյ ազգային անփոյթ առնելոյ
զայդպիսի գործառնութիւնս. յորում մթերեալ են տոգորք
աստուածային եւ ենթակայացեալ ամենայն արհեստի
մակացութեան եւ նախադասեալ է թուականութեանն
եւ երաժշտականութեանն, որք են ի տարորոշ
քանակէ տարակացեալք. իսկ երկրաչափութեանն եւ
աստեղաբաշխութեանն, որք են ի շարունակ քանակէ, եւ
զկնի այտոցիկ յարամանեալք արհեստք եւ մակացութիւնք
մատենագրութիւնք եւ գրէ եթէ ամենայն բոլոր վարժումն
հոնտորական, թէպէտ եւ մասնաւոր գփոշէտեսակսն
գօրէն գործասէր մեղոյի ամբարեաց ի մեղուանոցի
այդր ի բագնավէտ մատենագրից Քաղղէացոց եւ
Յունաց եւ ամենայն ազգաց առ ի ծանօթ լինելոյ, որք
նախ քան զայնոսիկ հաւաքեալն մատեանս, մակացոյ
եղեալ իմաստասիրութեան. քանզի որք ոչ նախուստ
կրթեալք են, բոլորովին ոչ գոյ հնար թեւակոխել
զայնպիսի աստուածաբանութիւնս. քանզի պարտ է նախ
ի բնաբանականէն յուսումնականն ամբառնալ եւ անտուստ
աստուածաբանականն. քանզի որ այլազգ խորհեսցի, ըստ
ասացելումն, տրամախոհի ի վերայ Ոլոմպիոսի դնել
զՍեստոս եւ յայնի յարաբարդել զտերեւաշարժն Բիդոն,

որպէս զի երկին ճեմարան լիցի նոցա, քանզի յոյժ տարախոհիցն եւ անտիական մտածութեանցն է բաղձումն այս. վասն որոյ եւ Պղատոն իսկ զգուշացուցանէ այսպէս յիրումն աստուածաբանութեանն. Աներկրաշափական որ մի՛ ներամտեսդէ. զայսոսիկ ասելով, զի մի՛ որ անկատար ի քառիցն ենթակայէ մտղէ ի լսարանն. քանզի բնատրեալ էր հրաշալին այն միայն աստուածաբանութեանն պարապել եւ յայնոսիկ զկրթեալսն հաստատել ըստ օրէն հիւսնաց, որք արհեստին են մակացուք, ոչ նախուստ յանտառս կամ ի մայրս ճեպին հատանել փայտս. քանզի այլ որ են պարապեալ այնոցիկ եւ այլ, որք հարթեն եւ սղոցեն եւ ապա ծայրագոյնքն ճախարակօք եւ այլովք գործարանօք գեղապանձ յարդարեն զահաւորակս եւ աթոռս եւ այլ ինչ գործարանս: Այսպէս եւ որք ոսկւոյն են պարապեալք եւ երկաթոյ եւ պղնձոյ:

Եւ արդ՝ քանզի սակս մատենին Անանիայի եղեւ յիշատակ իմաստասիրելոյս մեզ, բե՛ր ոչինչ խրթին եւ անյայտաբար. կամիմք զհայցուած մեր ծանուցանել մերոյ լուսատրչիդ. ՚ի բազմաց անփոյթ եղելոյ այսպիսի գործառնութիւնք եւ հանդէսք, որ ոչ երբէք ի ստադին վարժելոց գրամարտկոսաց եւ քերդողաց հնացեալ, ի մոռացումն այսպիսոյ մատենի ոչ միայն եւղեւ անկանել, այլ եւ բազմաց, որպէս ի մերոյն Մովսիսէ ուսեալ, գտեալ գտաք, եւ յայդմ մատենի մակագրութեան վերծանեաք: Քանզի Արամեան սերի հպարտութիւն եւ անամոք բնութիւն եւ խստապարանոց բարս ոչ ստորակայի յայսոսիկ

կրթութիւնս յարատեւական հաւանել, կամ եթէ ոչ փոյթ, որք պետականին հասին բախտի, մեծարու լինել եւ խուզել գլխոհեմական արհեստս ի գարդ քարգոնոսական ապարանին, որպէս մեծ Փտլոմէոսն այն եւ որք այլք այդպիսիք. եւ զի բագում աշխատութեամբ խոնջեալ եւ տագնապեալ, մինչ տակաւին յիմում անտիականն ելով տիս, հագի հագ մակացու այսմ եղեալ, սող ինչ էակացն հասեալ, ըստ որումն են յԱրաբացոց եւ Քաղդէացոց եւ Յունաց, ոչ դանդաղեցայ քննութեամբ գփորձ առնուլ:

Եւ խնդրենք ի քումնէ լուսափայլութենէն գնորագոյնն մատեան շնորհել մեզ, զի այժմ մերձ առ ծերութիւն հասեալ ենք, եւ դիւրին վերժանեալ հասցոյք ըստ կարողութեան, զի մի՛ յերկոցունց կողմանցն ունիցիմք մարտակցութիւնս՝ տեսութեան եւ մտածութեան, քանզի լուսով քո տեսանենք զլոյս: Ապա եթէ ոչ այսոքիկ հաճոյ թուեսցի քումդ աստուածպետական իշխանութեանդ, զոր եւ կամեսցի, այն իբրեւ յաստուածուստ պարգեւ համարեալ է մեզ. ողջ լե՛ր, փոխա՛ն Աստուծոյ:

[Գ]

Պատասխանի կաթողիկոսին յաղագս Գագկայ, որ ասէր թէ խորհին կորուսանել զքեզ:

Եւ արդ ծառայից փոքր ի շատէ արդարեւ ճշմարիտ սիրելոյդ Յիսուսի եւ բարեկամիդ իմ գիտենք, զի սէր հոգւոյն ստիպէ զքեզ յաղագս եկելոցս ի վերայ իմ ի տարակուսանս եղեալ յանգրաւական եւ յանսպառ պատժապարտութեան, անպարտական գոլով, եւ ի բոլորեցունց պարառեալ անպայման եւ պղտորեալ խորհրդով, եւ խարդաւանս ի վերայ իմ խոկալով, խազմ յարուցեալ խիզախողաց յոմանց եկելոց եւ յոմանց յարուցելով կեամք, ակն ունելով Աստուծոյ, ասելով. Հայեա՛ց օգնել ինձ Տէ՛ր փրկութեան իմոյ. եւ ընդէ՞ր Տէ՛ր կացեր ի հեռաստանէ, անտես արարեր ի նեղութեան ի դէպ ժամանակիս, եւ գոր ինչ միանգամ այսպիսիք ի Դաւթեայ նուագեալ երգի քաղցրաձայնեալ, ինձ մխիթարականս եւ սփոփանս վարկանիմ նաեւ գորացուցիչս եւ խրատականս եւ յուսալիս: Բայց ի մտի եդի եթէ սակայն եւ այս ջան է առաջի իմ եւ ոչ երկեայց, յորժամ մեծանայ մարդ: Այլ գիտենք, զի մեղադիր լինիս սակս լռելայնս կալոյ՝ ՚ի բազում վշտաց եւ ի լեզուաց չարեաց, այլ ես ոչ նստայց յաթոռս նանրաց եւ ի հակառակել մեղաւորին

առաջի իմ լուռ եղեց եւ ոչ բացից գբերան իմ: Բայց աղեհայեա՛ ի հեգութիւնն Դաւթայ, թէ ի բագում տարակուսանս եղեալ յաղագս լսելոյ Տեառն վշտացն ուրախսի գոհանայ գՏեառնէ. Սիրեցի, ասէ, զի լուիցէ Տէր գճայն աղօթից իմոց, խոնարհեցոյց գունկն իւր առ իս եւ ես գաւորս իմ կարդացի առ նա: Արդ յորժամ լսել սովորեցայք, զի՞նչ եւս ասել կամիցի ոք, բայց միայն յայցանէ. Ի վերայ իմ ուրախ եղեն, ժողովեցան յիս տանջանք եւ ոչ զղջացան, փորձեցայ արհամարհանօք եւ այլն արարեալ կրճտեցին ի վերայ իմ գատամունս: Տէ՛ր ե՞րբ տեսցես, ի բաց արա՛ զմիամօրութիւն իմ ի խորամանկութենէ նոցա. եւ ի խորագոյնն վարեալ հանդիսի, որպէս յարի անդ. Ձայնի իմով ես առ Տէր կարդացի, եւ հեղից զարտասուս իմ, զի կորեալ յինէն փախուստ իմ. կամ ի գերշացն հարցեալ եւ ոչ երգեալ յօտար երկրի, միայն առ Տէր համբարձեալ գաշս, ակն ունելով ուստի եկեսցէ ինձ օգնութիւն:

Այսոքիկ են ինձ իբրեւ զկերակուր եւ զըմպելի եւ եթէ առ այսու արժան է ասել. Հայր իմ եւ մայր իմ թողին զիս եւ Տէր իմ ընկալաւ զիս:

Այսպէս հայելով քեզ ՚ի բարձրագոյնսն խորհուրդ ի բոլորն բիրտուց համահաւարեալ ըստ իւրաքանչիւր ունեք ի վերայ կացեալ երգս. այս ի հոգւոյն շարժեցեալ ճշմարտապէս անվթար ցուցան իբրո՛ւ սակս այնր իսկ ասացեալ մարգարէութեանն: Տե՛ս ո՛վ վեհագո՛յն, զին՞չ ինձ այլ քան գայս իմասցի գերակատար մտածութիւն եթէ ոչ յաղօթս կալ. վասն զի արին այն եւ քաջամարտիկն, որ պարսեաց զհսկայն

դէպ ուղղակի ի ճակատն, ճահեցուցեալ հնչայթութիւնս պարսին որոտիւնս թնդեալ յերկիր գարկուցեալ եզեն զինով նորին Գողիաթայ. սակայն ասէ. Հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարոյ, զինէն խօսէին, որք նստէին առ դրանն, զիս այլն առնէին, որ ընպէին զգինի: Չոր եւ այժմս կրեմ ի թշնամեաց Տեառն. Տե'ս Տէ'ր եւ մի' լոեր եւ մի' ՚ի բաց առներ յինէն. մի' մատներ զիս Տէ'ր ի ցանկութիւն խորհելոցն ի վայր հարկանել զիս. առաջի քո Տէ'ր են ամենայն ցանկութիւն իմ:

Այսպիսի առասանս ձգեալ պարաւանդելով շուրջ զշաղոթ ինովք դնել ինձ գայթակղութիւն, խոկացաւ խորամանկելով խոտորել զճանապարհս իմ. այլ իմ միայն ի Տեառնէ. Օրէնսզէտ առնէ զնա ի ճանապարհի, յոր եւ հաճեցաւ. սկսանելով նիթել ինձ որոգայթ եւ բազմաց ասել զանձնէ իմնէ թէ չիք սորա փրկութիւն. Տեսից գատամունս մեղաւորաց խորտակեալ եւ քաղցր ննջել զարթեայց եւ գտից ի թիկունս հասեալ զՏէր. քանզի յորժամ տկարանամք, յայնժամ զօրանամք: Ասացին ոմանք. Հասցուք, հարցուք, բաժանեացուք զաւարն եւ լցուցուք զանձինս մեր: Սակայն յուսալով ի Տէր անցից ընդ ծով եւ երգեցից Տեառն նոր երգ. Իրաւունս ինձ ելցեն եւ աչք իմ տեսցեն զուղղութիւն. եւ ոչ խօսեցայց բերանով իմ ի գործս մարդկան, զի զադտնեօք լցցին որովայնք նոցա եւ յագեացին կերակրօք եւ թողցեն մանկանց իրեանց: Ահա' հասեալ է Տէր ի դատել զերկիր, դատել արդարութեամբ զաշխարհ եւ զերկիւղածս իր ուղղութեամբ: Մի' խաբեացի անձն քոյ զհետ համոզեալ

հողմոց եւ տարաբերեալ: Չոր ինչ սերմանեմք, գայն հնձեմք. ահա՛ սերմանան իմ յայտնապէս եւ ահա՛ հունձս, գոր հնձեմս յայտնի: Թէպէտեւ արտալաժի շեղիաս, անցեալ ընդ Յորդանան ոչ մեռանի. սակայն քուրմքն ծանակէին: Թէեւ ծաղր լեալ ի մանկանցն Եդիսէ, ոչ կունդն ասելով կորնչի, այլ մանկունքն յարջիցն սատակին: Յիսունքն այսն առնեն կրկին գԵղիայ, այլ հուրն փորձէ գնտաս: Եւ քա~նից յիսնաց յիմս հասեալ հինիւ հրեշտակք եւ հրաւիրողք մահու, գոր հեզաբար ընկալայ ծանուցեալ եթէ որոյ իցեմ հոգւոյ: Ծանի՛ր, ո՛վ մտացի՛, Դանիէլ ոչ զգերութիւն դարձուցանել կարող էր զշարժեալն ի Տեառնէ ցասումն. սակայն ինքն ապրեցուցանէր ի Քաղդէացոցն. առ Տէր կարդալով երից մանկանցն, ոչ հնարէր ապրեցուցանել զԻսրայէլ, այլ հուրն ի ցօղ փոխարկի, եւ որ այլք այսպիսի:

Եւ զին՞չ ինձ առ այս բիրապատիկս ածել ի դիմի անտեղի քեզ, որ ծանօթ ես ամենայնի եւ տիրաբար ծանուցեալ, այլ գայտսիկ վասն յօժարութեանդ քո, զի գիտեմք, որ հոգաս միշտ վասն իմ:

Արդ ե՛կ դու ո՛վ գերակատա՛րդ իմաստից, տե՛ս զիմոյ անտեղի մտածութեանս, յորս անկայ փորձութիւն առաւել քան զպոռմիականն, յորս ոչ բարերջանիկ գոլ նմա եհաս հանդէս. ըստ որում որ ՚ի գռեհիկս պատմի առակեալ՝ արտուտի զգուշութիւն երկնի յստորս կործանիլ. եւ նա անկեալ պորտ յորսայս, գտան ի վերայ յերկին ջանայ կարկառել, զի մի՛ երկին յերկիր անկցի խափուցեալ. ի պարսաւ առեալ ոմանց թէ որո՞վ ծղէ ծնգօր ծառանաս

Ժտի'կ քո ծովդ խելօք. պատասխանեալ հաւն ասաց. Որքան կարեմ, գայն առնեմ: Արդ իմ ծղէ ծնգօքս է. օգնական է սրբոյն Գրիգորի եւ Արամեան նահանգիս, զոր Երեմիաս ի Տեառնէ կոչէ յօգնականութիւն. սակայն, յուսալով ի Տէր եւ հաւատալով իբրոս անտուտ խոստմանց, յարեայ աճապարեալ քաջագօտի գտեալ ի սեփիականն հասուցի հայրենի, զոր ի բազմաց վաճառեալ եւ ծախեալ եւ այժմ հալածական լեալ փախչիմք, Տէր արասցէ դատաստան:

[Գ]

Պատասխանի տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի սակա տրանշոյ գորդւոյն Աշոտի մինչ կինն վաղճանեցաւ:

Եկն եհաս աւետաւորս տառ տարրական իմ նուիրաձիր
իբրու գսիք գովացուցիչ եւ գտարաք ի տապացեալ
ժամանակս. եւ արժարժեալ վերստացայ զհոգի իմ ի
դրանց դժոխոց. այլ զայրական սերտութիւն քո մշտաժան
յարակցութեամբ տեղեակ եմ. վասն զի բազմատեւական
համբերութիւն քո յանհունն հասանէ գիտութեան զգալեացս.
սակայն եւ երբեմն սրտմտականն ընդդէմ օձին. յիշեմ յայսմ
վայրի զՅիսուս զայրացեալ. եւ ո՞ր արդեօք՝ ի վերայ ալեացն
եւ առ Ղազարու. նա եւ մոնչեաց անդ. սաստի դողացուցանէ
զիշխանութիւն այսոց եւ կորզէ զորս կամէր. նա՛ եւ ի բազում
փորձութեանն լոեալ, զհամբերութիւն ուսուցանելով մեզ. եւ
երբե՛մն զկնի փորձութեանն ոչ հանդուրժեալ այլ յետս
զարկուցանէ եւ ապա թոյլ տայ նմա. եւ եթէ պա՛րտ է ասել, ոչ
յիւրումն գաւառի ընկալան գնա. բարձրագոյն եւս, յիւրսն եկն
եւ իւրքն ոչ ընկալան: Գիտեմ եւ՝ ի հեթանոսս գնշանսն եղեալ
եւ գովելոյ արժանացեալ եւ յԻսրայէլի ոչ այնչափ հաւատս
գտեալ:

Այլ քոյդ կապանս եռակի իմն հանդիպել, գոր դու խնդամտութեամբ ընդունիս. սակայն այսպիսի աղէտ տարակուսանաց ինձ ոչ եհաս երբէք որպէս այժմուս, զի հօտ անհովի մանաւանդ եթէ ես իսկ մի ի նոցունց մոլորեալ, գոր ի վերայ ուսոցդ դնել կարօտէի. զի ոչ ողէզնացութեան էի զկնի այլոց օտարածայնութեան. քանզի ի քեզ զբոլորն շարաբառնիլ հաւանէի եւ գնաւապետդ կապեալ այժմ. զի՞նչ դեկավարացն հասցէ աղէտ. որ եւ այժմ ոչ տեսութեան կամ գործի, որպէս նախասացի, եթէ կարօտեալ տառի տեսանելոյ քոյ. եւ ոչ հնար էր յիշխանացդ պաղատան մանաւանդ յայդմանէ, որ զբոլորն պտուսկէ շարիս, որպէս յայնժամ զծովածին հօրն քո յԵգիպտոսէ եկեալ, որ կարօտ էր առ արքայ մուծանել, ապա ի պատառուած եղեգան փորուածի ծպտեալ գտառ զծի իրոյ այնպէս ծանուցանէր. գոր այժմ յարամանեալ պատկանի տարացոյցն այն, գոր յուսամք որպէս նոցայն կատարել. գոր յերիս ատուրս ոչ ընդ իշխանս շրջին, այլ ի հրեշտակէդ պարարուն զպատգանս աստուածեղէնս լուայ թեպէտ եւ անյարմար. սակայն ի նշանացն ի բանիցն միով զբիրսն ծաննայ, քանզի սովորեալ էի հնարից եւ խաբէութեան անօրինացն եւ սակս կաթոտաբորբորիտոն եւ վաւաշ կիւսակերտօղ եւ օճիրագործ հատրնկէց վիուկ ճուաղանն, գոր խափուցանօղ իմն եւ զարհուրեցուցիչ յարուցանէ մրրկեալ ալիս, որպէս ճուաղանց է ճարակ ճռուողել ի գիշերի յանկողինսն, զարկումն եւ շարժումն լկանաց, եթէ զիարդ համարձակիր ընդ վիմիդ հաստատուն.

կամ կարէ կարկատել կեղծաւորելով բան գորէն կորիք
բանդականին տիտանեան դայեկաց: Բայց միայն վէն
գայթակորութեան եւ գլորման դոցա խնդրել, եւ հարեալք
փշրին, ոչ զբարութիւնսն վայելով գայրացուցանեն. հոգի է
հեգութեան եւ գայրանայ մեղուցելոցն: Արդ ինձ եղիցի զփորձ
առնուլ հեգութեան, եւ դոցա զսրտմտութեանն մանաւանդ
վիժածին այն վատթարածին, որ բազմամեայ ճանճրութեան
ներկմամբ իբրո զճանճախարիդ որակացեալ սովորական
խեղկութեամբ յառնամուլութեան գորէն Արամագդեան առ
Արգիացիսն յափշտակութեան մանկանց, որ մատռուակէին,
կամ զԱռիդինեացն եւ զսկրատեանցն գոնորական
եւ սողոմայեցի անպատկառաբար պագշտութիւն. եւ
տակաւին հնարի դիթութեան կիսոյ եւ վիուկս ընդ
ինքն խորհրդածուս յուս իւր բառնայ ստանճնեալ որպէս
Կենտիտոս Պոիդայն, որ առ Նեբրոթաւ նահապետ. եւ
ահա՛ ոչ թողից շասել՝ մինչեւ ոչ անկցի ՚ի վիհ ծծմբեայ,
ոչ խաղաղացի աշխարհ. վասն զի այսպիսի ծնանի երկիր
կարապետ, այն. գոր կապեցէ Տէր Յիսուս հոգով բերանով
իւրով: Այլ սակս թխտի քո յափշտակելոյ յուղոջ մի անկցի
քեզ երկիւղ կասկածանաց, զի ոչ համարձակի որք յիմնէ.
այլ զի գրեալ էր քո, եթէ զկնի մահուան կնոջ իւրոյ առաւել
է ի սէր հօր նորա, այսոքիկ շամիրամեանն յուլիս թերեւս
դիցն լեզեալ յարուցեն զԱրայն, որում տոփէր հրացեալսն
այն բորբոքմամբ, այլ մեք ըստ հրամանի եւ ըստ գրոյ քո
արասցուք զամենայն ողջ լե՛ր:

[Ե]

**Պատասխանի տեառն Պետրոսի
Հայոց կաթողիկոսի ի ժամանակի
քանզի խնդրեաց յաշակերտաց
իրոց գոմանս, զԲասիլն եւ զԵդիսէ:**

Զվսամականն մականունութիւն սրբագնաբար ընկալեալ քո բոլորն հարց պետականութեանց, մաքուր եւ անաղօտ լուսափայլութեամբ ի մեզ ճառագայթարձակ փայլատակեալ, հեղումն եւ գօրութիւն տաժօղ, եւ առոգութիւն, կենդանութիւն եւ նորոգութիւն անհատաբար մշտաշարժութեամբ բաղկացուցանես քում վիճակելոց երանաւետական դասու ըստ էլիոսական երրորդ լոյսդ կամ սրովբէական հեղումն եւ ազդեցուցանօղ յստորեւ կացեալսն: Իսկ չարափառութեանն կիզիչ եւ հատանօղ տապար, ըստ որում եւ գնմանութիւն ունել ոչ միայն այսոցիկ, այլեւ առաջինն լուսոյն, յորմէ լրացեալ լուսաորութեամբ ի լուսագոյնսն յարամանեալ պատկանեցար պատկեր:

Ծառայ քո Գրիգոր, որ ընկալայ զգիրս եւ ընթերցեալ ծանեայ զժայրագոյն սիրոյ սրբագանիդ, որ անդրն է քան զմիտս մեր ունակութեան եւ գիտութեան, եւ Յիսուսի միայն նմանութիւն եւ դրութիւն հետեւաբար հանդիսանալ յաւէտ եւ ողջախոհական հաւատոց ճանաչելի:

Ապա առեալ գտառս տախտակի ըղձական, տենչացայ վերստին անոգանալ. եւ իբրու փոքր ինչ փանաքիմաց մտածութեամբ փեռեկեցի զգայարանս հանճարոյ, եւ ողջագորեալ շրթամբք, ի վերայ աչացս եղեալ խանդաղական խորհրդով գոհացայ զՏեառնէ, եւ արտօսք ինչ թորեալ, գրէ եթէ կերտարան որակացեալ արտահոսեաց կայլակս ստորակայեալ հուպ երկրի ծորեալ ի ծով մածուցեալ սակս կապանացն քոց վերստին յիշման, գմտաւ եւ ի զարմացման եղեալ. եթէ զՅիսուսին ածից գմտաւ յաղագս քոյդ հեգութեան, գտայց հարիւրապետն կամ Յովսէփն աստուածացեալ մարմնոյն հայցող կամ Նիկողիմոս գիշերային կամ ի գերեզմանն ճեպօղ եւ յերկիւղէն ոչ զանգիտօղ. ապա եթէ նախ քան զայստսիկ, ներքինապետ եւ սպասաւոր մարգարէականին դասու ի Բաբելոն եղեալ, եւ առաքելականին ծայրութեանն եւ հազարապետացն կապանացն ողջունի եւ լուսաւորութեան գիտեն գոմանս արժանացեալ, եւ արեւմտականն արեգական հօրն քում համանուն, որ յԵգիպտոս գլխադադութիւն խոովչացն խնդրեալ, եւ բանդապանացն պարգեւս շնորհեալ. եւ զպտուտկեալ շարն շիջուցանել, որ զՅիսուս յարակայ իւր տեսանէր յաթոռ: Հաւանիմ եւ որ գտառիցն տասանց պատարեաց զպար, նմա եւ գոլ բանդապետ եւ զգուշացող եւ հաւանեցուցանօղ խականիտական խորհրդոց:

Եւ զի՞նչ ինձ այսոքիկ երկարագոյն բանս եւ ծանօթագոյն իբրեւ ուխից ինչ նուագ ի ծով ծովացեալ, սակայն ոչ

թողից գնեոյն Պարթեի, որ պար առաջին էր պարծանաց քում տողանի տէրութեան եւ հայր քո, յիրումն խորագոյն գբի զխուզոն Օտայ անուանեալ, որ ի խնդիրն շոգաւ եւ ի խաւարչտին խորափտէ առասանով բերեալ, բարի յիշատակի յիրն աստուածեղէն տառս արժանի եղեալ գրէ Ագաթանգեղոս: Այս այսքան բաւական լիցի:

Գրեալ էր քո յաստուածային նմանակիս լուսաներկդ աշոյ բան գովացուցանօղ եւ շիջուցանօղ մխիթարական ըստ որում քահանայապետութեանդ վայելչաբար իրողութեամբ, ընտ որում առատաբար շարժումն եւ մատակարարութիւն: Քանզի լի եղեաք տառապանօք ի բոլորն հարուածս բաւականապէս ի հինից հրոսակաց եւ յարշաւանաց ասպատակողաց եւ գերշաց եւ յամենայն նուագութիւնս, որք հետեւաբար ի կենցաղումն կրին, որ առաւել քան գշրէաստանին հրաձգութիւնս եւ աւարումն ընկալաք: Աւա~ղ եթէ ո՞ր այրարատեան գունդն եւ ասքանագան գօրն եւ որ այնմ կցորդաբար գօրութիւնք եւ գործք արամեան նահանգիս:

Իսկ սակս Ստեփաննոսի ծառայի քո եւ ըստ հրամանի քում արժանացեալ սպասաւորի եւ ճշմարիտ քահանային Աստուծոյ փոխմանն սփոփիչ եւ փարատօղ բանի եւ գրով պատուեցեր զիս պայծառ եւ պուետական առասութեամբ: Պատուեցէ զքեզ պահապանն Իսրայէլի պարծանաց խաչին իրով պարսպեալ ի պատուականդ աթոռ անպայման պարառաբար ամօք մինչեւ ցգալուստն իր:

Եւ ծառայ քո, հուպ երկրի հարթ ծունր եղեալ, օրհնութիւն եւ գոհութիւն մատուցի եւ աղօթս առ այն, որ ետն գփոխանդ իւր վերակացու մեզ, շնորհեալ մեզ ընդ երկայն ատուրս:

Գիտես ո՛վ աստուածայինդ գլուխ գաղէտ այսպիսի թշուառութեան. յորմէ ակն ունէի ծածկիլ, եւ որում առաջին երթալ, զկնի դադարել. եւ այսոքիկ հարթութեանն հանդէսք տարակուսանաց եւ դողումն այսպիսում հասեալ փորձութեան արբահամեանն պատարագին, թեպէտեւ փոխանակ Իսահակայն մինչեւ ի հրեշտակէն վերջնանահանջ եղեալ, որ զճեռսն կարկառէր ի գենումն, եւ Յակովբայն Յովսէփայն յեղբարցն դաւաճանեալ: Ողորմելի է պատմութեանս տարագ. քանզի զիտէ քոյդ աստուածային սէր մանաւանդ, որ զփորձ առեալ եւ զհոգւոյն ծննդականութեան գերագոյն քան զմարմնոյն, ըստ աստուածաւանդն ասացեալ բանի: Սակայն իմ յանկենցաղս յայս կենցաղավարութիւնս հայելով, կարօտիմք, որք վաղվաղակի հասանեն խաղաղական շիրմի. եւ ի շռայլեալ յայսմիկ շփոթութենէ իբրու շահատակելով փախչիմք, ի վնասակարս այս եւ ի մահացուցիչ բազմապատիկ կենացս գերծեալք:

Իսկ յաղագս մանկանցս մեր ողորմելով եւ արժանիս առնելով, հրամայեալ էիք առաքել առ ձեզ, զի ծառայեսցեն փոխանիդ Յիսուսի եւ նորայն կենսաբեր սուրբ նշանիդ եւ զայն յոյժ խոնարհութեամբ եւ հայցմամբ որպէս հոգւոյն հեզութեան, որ զկնի իւր ձգէ. ըստ որում Ողորմեցայց ում ողորմեցայց եւ գթացայց առ որս գթացայց. եւ եթէ

Ընտրեաց զմեզ յառաջ քան զլինելն աշխարհի. թոի ինձ թէ ըմբռնմամբ ձգէ առ ինքն. եւ է ինչ մէնջ հայցէ, եւ է ինչ զի ի գոր առատապէս բաշխէ, եւ յամենայնի ներողութեամբ եւ ողորմութեամբ օրհնաբանեալ բարեբանի յիրումն առանձին անցեալ սարաւանդեալ բարձրութեան. եւ երկոքումքք փառատրի փառաց թագաւորն. գտորբսն սիրէ եւ զմեղուցեալսն առ ինքն դարձուցանէ, նոյնպէս եւ միջնորդդ Աստուծոյ եւ մարդկան:

Ես կարի յոյժ ուրախ եղէ. վասն զի գտիինքս այս ի քաջ հովիւ վստահացայ եւ ի ներքս ի գաւիթ քո մտցեն. քաջ գիտեմ, եթէ գող ոչ գոյ, եւ ոչ գողասցին, եւ զձայն օտարի ոչ լուիցեն, եւ գայլ ոչ յափշտակեսցէ. ի ներքոյ աստուածային քո գաւազանի գիրգ եւ փափուկք փարթամասցին, եւ առաջնորդական քո ցուպ ի վայրի դալարուջ եւ ի ջուրս հանգստեան սնուցէ, զի սաղարթասցին եւ պտուղն կացցէ:

Այլ դու ճշմարիտ արեգակն արդարութեան լուսափայլեալ, ի քեզ բերելով զգօրութիւն եւ զունակութիւն այնմ, որ լուսաւոր առնէ զամենայն մարդ եկեալ յաշխարհ այսինքն զբոլորն եւ ոչ եզաբար. վասնորոյ եւ յաղքատք այս եւ յանտոհմ եւ յոչինչս խոնարհաբար հետեւիս հայցել. եւ զի՞նչ առ այս երախտիս մատուցից քեզ յիմմէ: Մի եւ այս, որպէս յառաջագոյն զպատառոտուն գործիսն Յիսուսի, եթէ փոխանիդ իւր դոքա զհնացեալ ձորձս իւրեանց կամ զխակագոյն տիս մանկութեան եւ զախմարութիւն ի բոլորն բարիս:

Արդ ոչ դիցուք երախտիս այլ մանաւանդ ընկալցուք

գերախտիս, քանզի որպէս սովորութիւն Աստուծոյ է երախտիս համարել զձգիլն մեզ առ նա եւ զապրելն, եւ սովորութիւն մեր է՝ երախտիս համարիմք, յորժամ խոստանամք զառ ի նա կոյսն կեալ. եւ այն ցանգ սովորաբար ի մեզ կրի:

Արդ ա'ն ընկա'լ յինէն ընծայ զծառայքդ քո եւ Յիսուսի արեան գնեալ, ըստ այնմ Աստուած, թէպէտեւ ոչ ես այլ մանկունս իմ, զոր ետ ինձ: Եւ դու տէ'ր իմ ընկա'լ ի գիրկս, որպէս երբեմն Յիսուս. սերմանեա', մատակարարեա', ա'րկ զարծաթն, տո'ւր զմարգարիտն գնել, փշեա' զհոգին. փոխարկեցի անուն արդարութիւն. ոչ ցուպ եւ ոչ երկուս հանդերձս. օտարոտի ողջոյն ոչ երբէք տալ. ոչ մախաղ եւ ոչ պղինձ. եւ եթէ պարտ իցէ, բոկանի շրջել, եւ ազատաբար զխաշ առնուլ, եւ զալ զկնի քո, եւ կենարարդ հովուի հետեւել. թերեւս ի մահացուցիչ այս եւ ի թանձրագոյն մարմնոյս տղմատիպ ոչ քարշիցին, այլ վերաբերեալք ի վերայ վիմիդ հաւատոյ հաստատեալ, գետեղեալ, առկայացին, սաղարթացեալք ընդ հովանեաւ բազկի քո, ամրացին: Քանզի յորժամ համբարձցիս, կարկառելով զկուսածաղիկդ ծայրս մատանց, յորմէ լոյս դամբարափայլ փայլատակեալ զկնի կելով դոցին. ընկալցին զխաղաղութիւն տալով քո այնմ, որ ի վերն է քան զամենայն միտս եւ զխորհուրդս, եւ զսրովբէականն համարելով ընդ միեղինական դասուցդ, ընդ երկնայինսն կցորդաբար զամենայն կենցաղականս ՚ի բաց դնելով զգործ, զթագաւորն ամենեցուն ընդունիցին:

Այլ յաստուածանմանութիւն քո եւ յառատագոյն

գերակայացեալդ մտածութիւն եւ ընդարձակագոյնս առագաստ սրտիդ սիրական, որ առաւել լայնատարած քան գկամարն կապուտակեայ, որ վերին հռիզօղն պարփակէ, թուի ինձ եթէ հոգւոյն հեղումն ի քեզ հոսեցեալ մշտաշարժ եւ անդուլ մատակարարիս եւ մատակարարես ըստ որում Ձրի առիք:

Այլ ո՛վ քահանայապետ սուրբ եւ երկրորդ լուսատրիչդ Պետրոս, եթէ նախանձեցայց ես զբարոք նախանձն, ոչ պարսաւանս պարտ վարկանիւմ ինձ. երանեն մանկանցդ եկելոց ծառայել քեզ եւ անյամբ մշտապայծառ լուսովդ լրանալ. քանզի ականն տուրնջեան ցանգ յիրն կենդանատեսակս ողեգնացութիւն:

Եւ յայտոսիկ կամէի սուղ ինչ իմաստասիրե՛լ պղատոնական նորագոյնս առասանութիւն. քանզի սիրելի էր քեզ այտոքիկ, սակայն կարճաժօտ հատանել հաւանեցայ, բայց հոլովել բացատրութեամբ եւ ոչ ստորասացութեամբ փոքր ինչ սփռեցից մանկանցդ վարժման առ այնոսիկ, որ հակամիտաբար հեզնիշք լինին սակս զօտարս ժողովելոյ. ահա՛ ոչ թողից չասել:

Ամենայն բաղկացուցանօղ զօրութիւն տիրաբար ասացեալ առնու եւ զօրութիւն եւ գոյութիւն. քանզի գոյութիւն ի գոլոյն ասի, իսկ գոլն ածանցութիւն իրիք բաղկացումն ենթադրէ իբրու գոյ, ի գոյէ գտեալ գերաբնաբար: Ծառն ծանուցեալ ի Տեառնէ ասացեալ Տիմին է տառս. որք տիրաբար թեւակոխեալ ճաշակեն, ճշմարտապէս լոյս, եւ քաղցր ի քիմս քան զմեղր բերանոյ: Իսկ եթէ մակստացական

մեծագունի ումեմն պարգեի ըղձացեալ կայ, սակայն ի վերայ ունակացելումն, որ ընկալան, է եւ այլ ինչ աղբիւր ի մատակարարութեան մաքրեալ, առասացեալ յատորեւ կացեալսն առոգանութեամբ յորդագոյն արձակեալ վտակս. քանզի լոյծն այն տարբերութիւն յաժօղ խփեալ խեղդնու եւ խափանեալ խուպանի, իսկ կարծրն եւ ծորեալ շփոթեցի. եւ առ տունկս համանմանութիւն հաւասարապէս այսմ հանգանակեալ. եւ ի ծովէ համատարածն ծիծռանց ծամելեօք առնուլ կաթիլս ոչ նուագեցէ, այլ մանաւանդ կերակրէ. եւ ոչ տայ նուագութիւն արեգական ճառագայթից, զի եթէ բագումք ելով յոգունց տեսողաց, այլ նա զիրն ծայգէ ծայրաբար ճախրելով ի հոլովս ինքնաքարշ ողեգնացութեամբ, հսկայն այն ի ճանապարհս իր հիացուցանօղ տեսեամբ:

Արդ այսոքիկ քումդ անեգրական հեղմանց եւ մատակարարութեանց հանդէսք. վասն որոյ եւ նահապետն մեր Աբրահամ յայլընդակացեալ եւ յայլագգեաց առնութիւտել. եւ Մովսէս ոչ արգելու յիրն օրինադրութիւն մուծանել, այլ խրատ ընկալնու. եւ ամենաթագաւորն Յիսուս յաւետարանական քաղցր լուծ իր նուիրական մատակարարութեամբ աժէ յամենայն ծագաց երկրէ, վասն որոյ համարձակագոյնս առնէ գմեգ Պօղոս ասելով Ոչ ծառայի եւ ոչ ազատի, եւ որ այսմ հետեւաբար ասացեալք:

Այլ տէ՛ր իմ եւ թագաւո՛ր, եթէ ըստ Չեբեղեա յանձն ինչ գղոսս արարից, ծնօղ իմ գոլով, երկնչիմ գուցէ զբարձրագոյնն լուայց պատճառս, հօր տալով

գիշխանութիւնն, եւ հեթանոսաբար կարծիս կասկածանաց արկից եւ ընդդիմադրութեան պահանջել. ապա եթէ անգթաբար արձակեցից, գուցէ խորթս ծանիցին. այլ ինձ այսոքիկ իմացի պատուասիրել, գաւազանաւ գթալ եւ ողորմութեամբ տաժել եւ ի փառս ոչ միայն գոոսա, այլ եւ բազում որդիս Հօրն երկնաւորին եւ Որդոյ նորա Միածնի եւ Հոգոյն կենսարարի, որով կեցցես եւ փառաւորեսցիս ըստ ատուրց երկնի յաթոռ սրբութեան քո անսասանելի եւ անսայթաք ի վերայ վիմի հաւատոյ հիման առաքելոց եւ մարգարէից, վէ'նդ ճշմարիտ անկեան: Ողջ լինել քեզ ըղձամ մինչեւ ցգալուստ Որդոյն Աստուծոյ, որում փառք յաիտեանս ամէն:

[Զ]

Պատասխանի տեառն Պետրոսի կաթողիկոսին Հայոց մխիթարական թղթին:

Զլուսափայլութեան քո ճառագայթարձակ ծագումն ըստ արեգակնային մշտապայծառ վսամական գարդուն, որ ոչ կամելով ուրեք գստուերանալն, կամ գծնակացեալ նսննութիւն ուրեք գետեղել, եւ որ ոչ միայն ըստ բնութեան գիեղումն մաքրափայլ լուսոյն ի մեզ արձակէ, գոր յարփոյ անտի ըստանձնեալ թորեցուցանէ, ոչ շատացեալ այսմ, ցանգ յաժաշու խոնջմամբ շրջաբերի գիրն առատացուցանել արփիափայլութեան շնորհս, այսքար քոյդ լուսափայլութեան, մատակարարութիւն անդուլ եւ անյագաբար ոչ դանդաղի, որք ընդ քոյդ ենք արժանացեալ հովութեան պարու հօտ, մնալ ումեք խաւարչտին եւ նսննացեալ, այլ քումդ հաղորդաբար կամիս կցորդութիւն ամբիծս եւ անախտացեալս եւ զգաստացեալ: Վասն որոյ ստուգապէս գլուխ ելոյ զգօն եւ հանճարեղ մակացութեան պարառաբար գբոլորս անդամս խոկաս անխեղկեալս եւ անխօթացեալս մանաւանդ եթէ անյոզնամանական որակութեանց ոչ ստորակայեալս: Եւ գայտսիկ զի՞նչ արդեօք ի մէնջ գոհացողականս պարտինք բարեբանութիւն

Աստուծոյ այնմ, որ գրեց մեզ հայր եւ բժիշկ, որով Յիսուս ոչ անտեղի համարիւր այսմ հաւանել տարացուցի. բայց թուի ինձ քոյդ պետութեան կարողութիւն առաւել քան գբոլորս նախախնամութիւն, որ գրէթէ յամենայնի վերարժարծիչ ըստ իրաքանշիր կարեկցութեան շնորհս մեզ առատապարգեւ բնաւիցս ընձեռէ. գոր աղօթենք հանդերձ պաղատանօք երկարածիգ պարգեւել գրեց մեզ ընդ երկայն ատուրս:

Գրեալ էր ի քոյդ աստուածային տառի սակս իմոյ մանկանն մխիթարական եւ գովացուցիչ բան: Բիրապատիկ շնորհս եւ պտուղ ծննդոց իմոյ աճելութեան եւ առգութեան գայս համարիմք, զի թէպէտեւ մանուկն իմ յառաջադէմ եւ բարգաւաճեալ ծաղկէր յիւրն համանուն նմանակի հայկեանն շառաւիղ եւ մեծագունին հասեալ պատուոյ, մինչ տակաւին ի տարերս էր անթիպատութեանն նպաստկութեան, սակայն գոհանամք զԱստուծոյ, զի կուսական բրաբիոնաւն ի վերին հասեալ հայրենի, անմեղական անպարտութեամբ, գմկրտութեան օծումն անշաղախ յիւրն թագաւոր տարեալ զկնիքն անապական գանձո՛ւն, եւ զհօրն ժառանգեաց բնակ. այժմ ի նա զՍտեփաննոսին տեսանենք ուղղապէս իրողութիւն, զի զփակեալն նախահօրն Ադամայ բանայր. եւ մանուկն իմ զինն փակեալ եւ զկորուսեալ թերեւս ժառանգէ. զի մի՛ բնաւին զրկեալք սերիւ եւ տեսակաւ լիցիմք պակասեալ. այս ոչ պատուիաս, այլ ողորմութիւն ներողութեանն Աստուծոյ. զի պատուիաս պատժի գայն էր ինձ իմանալ, եթէ շաղախեալ ի մեղկեալ դուզնաքեայ կենցաղումս էր, եւ

այնպէս փոխիւր առաջի իմ, զի գրկիցէ զիս եւ գրկեալ
գնա. այժմ ոչ գրկեալ իմ եւ ոչ նա. երանելի ես
եւ երիցս երանելի նա: Օրհնութիւն Տեառն, գոհութիւն,
բարեբանութիւն, եւ եղիցի օրհնեալ յաիտեան: Եւ աղաչեմք
միայն զներողութիւն մարդասիրութեան նորա, որ ի վեր է
քան զներս մտածութիւն, զի զմնացեալքս պահեսցէ կենդանի
եւ անշաղախ, եւ հայրենի աւանդութեամբն առ Աստուած
գաճելն եւ զժառանգելն ընկալցին եւ ոչ յիշատակ չարեաց,
այլ մանաւանդ բարեաց աղօթիք սուրբ Լուսաւորչին եւ
փոխանիդ Յիսուսի. ողջ լե՛ր:

[Է]

Առ Տ. Պետրոս կաթողիկոս:

Ջգիր տարակուսանաց, որ յանտրամախոհէ անտի եհաս քեզ պատահումն արտալածական տարագրութեան ի քոյն սեփականէ, ի վեր քան զհիացումն ոչ միայն ինձ հասանէ, կարծեմ, աղէտ, այլ եւ յոքնական բոլոր մարդկութեանս, գրէ եթէ զարմանս եւ սարսափելի մտածութիւն, որ այնքան անյագաբար յածի անխորհրդավարժն այն թափառեալ ի խոյզ ելեալ խնդրէ միշտ զկործանումն իւր եւ այն ըստ հոգոյ եւ մարմնոյ. որ եւ անձկացեալ ըղձայ տենչանօք միշտ զմնացեալսն չարին գործել եւ զպակասեալն ինքեան իբրու տուգանս իմն վարկանի գոլ. եւ զի վատթարիցն իողագլխութեան անհանճար մտածութեամբ զվեհագոյնսն գրէ ի կենցաղումս զչարութեան խոկալ վարս, իսկ ի բարիսն ծոյլ իմն եւ զնուագականսն հազիւ հազ առնել երբեմն դանդաղի. քանզի մեղկասէր ծուլիցն հանդիսանալ հեղգութիւն է գովեստ. իբրու ասէ Սաբեղաս սակս Ատտինոսի, որ փոխանակ մրցական պատերազմին ըղձայր ասելով. Ո՞ որ ի կենցաղումս տայր ինձ միայն զմնջելն եւ զխորտկօք շատանալն. սակս որոյ ասէ Պոլէպոնոս, եթէ անտրամախոհն Ատտինոս ոչ զինքեան խնդրէր բարձրութիւն, այլ զբացանցականսն խոկայր բարձրացուցանել. գոր եւ մեր Մովսէս յիրում

մատենագրութեանն յայտ առնէ գայտսիկ վասն ուրումն այսպիսոյ խոկացողի: Բայց զի՞նչ ինձ փոյթ յայտսիկ օրինակ ի մէջ առնլով, գորս բիրս յայսպիսի արացոյց բերել դիրին է. բայց այսպիսում առն վատշուէր, կարծեմ, եթէ որ հռետորաբար կամեցի ըստ արժանն հակաճատութիւն ինչ պարսաւան, յաղթեցի. զի ոչ որ արժանապէս յայսպիսի ալիս հասեալ, խակութեան անտիական մտածութիւնս կարացել չափաբերական ինչ տաղիւք եւ կամ կարկատուն բանիւք առասանել. քանզի մակաւասար բոլոր մտածութեան եղկելի իմն միշտ խոկայ գկորստեանն շաւիղս յաճախապէս ընթանալ, մոռացեալ ուրեմն զքրիստոսական կրօնիցն աւետարանական եւ կենսատու բարբառն, եւ զընդքոյդ հովանեաւ սաղարթանալն, եւ աստուածավայելուչ եւ վսամական լուսափայլ վարդապետութեանն ծաղկել. բայց ուրեմն կամաւ խորշակահար եղեալ խամբեցաւ եւ ի ծուլութենէ վարուց մեղկեալ ի տղմատիպ կենցաղումս անօթ կամեցաւ գոլ արկածից չարին. այն, որ նախուստն պատճառն է ամենայն չարութեանն, եւ հակառակ բարոյական առաքինութեան նիւթել յառաջնումն, եւ որ այնմ հետեւին:

Բայց զի՞նչ արդեօք ի վերայ այսր ամենայնի գողութեան եւ աւագակութեան գրպարտութիւն կամ այսպիսումն կարծիս կասկածանա՞ծ յաւէտ անպատկառաբար ի վերայ կարկատել. ո՞չ զինքեան իսկ հայր առնէ պատճառ չարութեան, եւ այն իբրու զքեզ ծայրացեալդ ամենայն առաքինութեանց եւ բարեպաշտութեան բարգաւաճեալ. որ

Եւ հաւանիմ իսկ ասել եթէ ամենայն վարուք եւ խաչագգեաց կրօնիք Յիսուսի այրականին սերտութեանն նմանեալ. որ եւ փոխան իսկ վարկանիմ եւ նման աննմանիցն: Զիա՞րդ ոչ սարսափէր դնել յերկինս գբերան իւր. գմտաւ ածեմ այժմ գարբոյ եւ գաստուածային քահանայապետին, որ յաղագս սրբոյ ատետարանչին Յօհաննու հալածանաց եւ կապանած նորա մխիթարական բանս, եւ որք այնմ հետեւին:

Եւ սակս քեզ ուրախութիւն է ինձ այսպիսում պատահել փորձութեանց. եւ լուիցես գասացեալսն ի Հիպոկրատեայ եւ յայլում վայրի ի Պղատոնէ եւ ի Պիթագորեայ, գոր Նիկոմաքոս գրէ վասն արքային փորձութեանցն առ Պանիմաքոս ոմն, որ ի տիտոենացոցն դուժիցն աւարիւր, եւ ի կապարանի բազմամեալ ի յիւրոյն որդոյ եղբօր, Պամփիլոսն կոչեցեալ, կամ Հոփոսին, եւ որ յայնմ ճենարանին գփորձութիւնսն խնդրէին. ի վերայ եկեալ Եւպոհիրիդեայ, որ հաւանիւր զինքն կոփչօքն խորտակել, եւ պարկ գմարմինն անուանէր, կամ գԹիովնա, որ մեռանիլ յանձն առնոյր ի Սիկիլիացոց բռնաւորէն սակս մեծ ոլտանցն ոչ ուտելոյ, եւ միւս Տիտիոնին ոչ յայտ առնելոյ, եւ Սոկրատայ մեռանելն անիրաւաբար, կամ վաճառելն Պղատնի, եւ որք այնմ շարամանեալ նախասացեալքն քան գմեզ:

Ապա որքա՞ն, որ գկնի Յիսուսի աստուածպետականին լուսափայլութեան հանդիպեալք եւ կենսատու աստուածավայելուչ նորայն հետեւեալ խաչին. ո՞ որ գյուսացեալսն ի նա կարող գոյ տրտմեցուցանել երբէք, որք ոչ յայնմ կենցաղումս հաւանեցան ինչ փառաց հետեւել, այլ

որպէս ուղեգնաց ոք ուշ եղեալ առ որ հանդերձեալն է յայնս վաղվաղակի հասանել նաւահանգիստ. եւ այս այսքան:

Բայց եղկելի ինձ թուի գոյ անհանճարն այն, որ ոչ վայելել կամեցաւ ի քոյդ երանաւէտ բարութեանցդ, եւ ոչ արժանացաւ աստուածեղէն օրհնութեանցդ, եւ մաքուր եւ սրբագան ողջունի աշոյդ, եւ կուսական ծաղկեալ ծայրագոյն ալեացդ համբուրման. գոր աղաչեմ զքոյդ աստուածեղէն հեգութիւնդ, ներելով համբերել, եւ մի' ինչ ի հակառակացն ընդդէմ նորա բարբառել ինչ, այլ խնդրել ի Ներողէն զդարձ այսպիսոյ եւ զպահպանութիւն, յիշելով զԿարպոսին որ ի Կրիտէ, զի մի' ի յաւիտենական կորստեանն խրատեսցի, այլ ողորմութեան հանդիպեսցի եւ փոխանիդ իւր. ողջ լե'ր:

[Ը]

Առ Տ. Պետրոս կաթողիկոս:

Չներմականտաձական տրամախոհութեան տիրապէս
յաւէտ քո բոլորն հարց ծայրագոյն աստուածեղէն
մատին մակագրեալ տառ վերժանեայ սակս անիծելոյն
այն նորոյ Կայէնի, եւ միւսոյ աշտարակաշինողի եւ
սողոմայեցոյ, կամ Յանիսի եւ Ակիտոփելի, Գէեգի եւ
որ գկնի սոցունց Յուդայի. վասն զի եւ սա գիոգին
երբեմն ընկալեալ եւ նշանս եւ արուեստս յաստուածային
գօրութենէն սմա տուեալ, այլ թէպէտեւ զվարդապետն
ցուցանէր եւ գտեղին յայտ առնէր եւ համբուրէր, այլ
ոչ յաստուածային ամբիժ եւ անարատ Որդին Աստուծոյ
համարձակէր բարբառել անպատշաճագոյն: Իսկ սա
ճշմարտութեանն հակամիտօղ եւ ուրացօղ Հոգոյն Սրբոյ
առաւել մերկանայր գքահանայական պատուոյն շնորհս,
սպերախտ, սպիրատ, յանդգնագոյն, լկտի եւ անամօթ,
վաւաշ, բորբորիտոն եւ շամբուշ, բարբառով եղեալ յերկինս
գրերան եւ զլեգու իւր յաժեալ ընդ երկիր, ոչ բաւական
համարիւր խորթն եւ հովիշդ կաթողիկէ, եկեղեցոյ զիւրն
չարեաց ծառայութիւն եւ գնդութիւն ամահութեան դժնի
իւրոյն անտեղի գործառնութեանն: Վաղ ուրեմն ծանեար,
ծայրագոյնդ գլո'լիս, զայսպիսոյ հիւանդութիւն, եւ զխեղումն
անդամոց եւ զանբուժելի առանց ամենայն հնարից հատեր

սրով շոգույն այն, որ ի վեր է քան զամենայն սուր երկասայրի: Որ ոչ համարեցաւ բաւական զհարոյն յաւեժ շարութեան անշափութիւն, մեղկումն եւ տղմատիպ ստորաքարշումն. եւ զի հիբութեան հաւանութիւն ախտամոլի անմաքուր խողխողոզն հովիւ, որ բոլորն պարառու եղեալ շարեաց, այլ յԱստուած արկանէ ձեռն, եւ լեզու հրացեալ եւ մխեալ կայծակամբք կաղնեաց: Չայտսիկ գործէ, տէ՛ր իմ, տգիտութեանն հաւանութիւն. քանզի ամենայն տգիտութիւն գյանդգնութիւն գործէ եւ ծուլութիւն զմեղս. վասն որոյ խնդրէ ի մէնջ աստուածային պատգամքն այսպէս. Քննեցէ՛ք զգիրս եւ գտէք զիս, եւ Հարցջի՛ր դու ընդ հարս քո եւ ասասցեն ծերք քո: Եւ ո՞ արդեօք ծեր կամ հնագոյն քան զգիրս սուրբս եւ աստուածաշունչս. վասն զի յայնժամ ոչ գոյր զիրս, այլ միայն հարցն եւ ծերեցն պարտ էր հաւանել զրուցատրութեան. բայց եւ Դաւթեայ պարտ է մեզ հաւանել. Պատուիրանք Տեառն լոյս են եւ լոյս տան աչաց. եւ յայնմանէ երկիւղ Տեառն սուրբ եւ մնայ յաւիտեան, եւ այնու մերձենալ առ Աստուած բարի է եւ դնել առ Տէր գոյս իւր. իսկ որք հեռի արարին զանձինս իրեանց ի Տեառնէ, կորիցն, սատակեացին, պակասեացին ոյք ապստամբք եղեն:

Թուի ինձ եթէ եղկելիս այս նոր նեռն եւ ոչ զսաղմոսսն էր բնաւ երգեալ. եւ եթէ ի հարկէ երգեալ երբէք էր, ոչ ի միտ առեալ էր սորա, եթէ ոչ ի ճանապարհս ամբիծ գնացեալ էր. վասն զի, եթէ որ խօսէր զաղտ զրնկերէ իւրմէ, ի բաց հալածել հրամայեալ էր, որչա~փ զՏեառնէ եւ զԱստուծոյ իւրմէ. եւ եթէ որ հայհոյէ զիշխան ժողովրդեան,

մահու մեռանել, որչա~փ որ մակաւասար պետականութեան եկեղեցոյ. եւ եթէ որ երդնու ընկերի իւրում, նմա յանգաւոր է շլինել ի խորանին, ապա որ ստէ Աստուծոյ եւ փոխանի նորա, որչա~փ հեռագոյն եւ տարագիր ի խորանէն նմա լինել պարտ է: Ի սնափառութենէ եւ յաշաղութենէ կորնչէր ժպիրին այն Աքիտոփէլ, ի ծուլութենէ եւ յագահութենէ արծաթասիրութեամբ եղկելին եւ կծծին Յուդայ, ի գողութենէ եւ ի ստութենէ պատառիւր Անանիա. բայց սա, որ այժմ լուծեալ կործանեցաւ ոչ ի միոյ պատճառէ եւ ոչ յերկուց եւ ոչ յերից, այլ յոքունց՝ ի ծուլութենէ, ի տգիտութենէ, յանամօթութենէ, յարծաթասիրութենէ, ի պոռնկութենէ, ի վաւաշ ցանկութեանց, ի քսութենէ, ի հակառակութենէ, յագահութեանց, յորկորստութենէ, ի սնափառութենէ, մոլի անզգամն, խռովիչ, անագորոյն, ապերախտ, գող, կծծի, տիրատեացն, լեզուանին, գոր Դ-աւիթ անէծ:

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, [купив полную легальную версию](#) на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.